ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

24 հոկտեմբերի 2025թ. թիվ 1213

Մ.ԽԵՉՈՒՄՅԱՆԻՆ ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՄԵԿՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2335-Ն որոշմամբ սահմանված կարգի 1-ին հավելվածի 7-րդ կետով, ՀՀ վարչապետի 2018 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 1230-Ն որոշմամբ սահմանված կարգի 9-րդ և 12-րդ կետերով, հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2025 թվականի օգոստոսի 4-ի թիվ ԴԽ/17.3/26601-2025 և ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալի 2025 թվականի օգոստոսի 1-ի № 1105/42107-25 գրությունները, հաշվի առնելով ՉԺՀ-ի Ֆուժիան նահանգի արտաքին տնտեսական համագործակցության կենտրոնի հրավերը՝

Հ ր ա մ ա յ ո ւ մ եմ.

1. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ Միեր Խեչումյանին 2025թ. հոկտեմբերի 27-ից մինչև նոյեմբերի 11-ը ներառյալ թույլատրել մասնակցելու ՉԺՀ-ի Ֆուժիան նահանգի Ֆուզոու քաղաքում կայանալիք «Հայաստանի տեղական ինքնակառավարման մարմինների համար տարածաշրջանային տնտեսական զարգացում» խորագրով դասընթացին:

2. Մ.Խեչումյանի՝ ՉԺՀ-ի Ֆուժիան նահանգի Ֆուզոու քաղաք մեկնման հետ կապված ծախսերը հոգում է հրավիրող կողմը:

3. Մ.Խեչումյանին՝ վերադառնալուց և աշխատանքի ներկայանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում այցի արդյունքների մասին հաշվետվություն ներկայացնել ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարին և ՀՀ արտաքին գործերի նախարարությանը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

10/24/2025

X

ՄԵՐԻ ԴԱԼԼԱՔՅԱՆ

Signed by: DALLAKYAN MERI 5303860493

Մ.ԴԱԼԼԱՔՅԱՆ

2025թ. հոկտեմբերի 24
ք.Վանաձոր